ման, եւ հետեւման, ուղղադաւան սրբոց հայրապետացն նախնեացն եւ վերջնոցն: Եւ ըստ ընտրութե(ան). եւ դաւանութե(ան). երկոտասան Ա(ստուա)ծաբան վարդ(ա)պ(ե)տացն: Եւ ըստ կանոնադրութեան, եւ սահմանադրութեան. չորից ս(ր)բ(ո)ց ժողովոցն: Նիկիոյ: Կոստանդնուպօլսոյ: Ցեփէսոսի: եւ Քաղկեդոնի: Կամաւոր յօժարութեամբ, աներկրայ հաւատօվ: անդառնալի յուսօվ: եւ անվախճան սիրով: Ես ք(րիստոս)ի նուաստ ծառայ Ցակոբ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամ(ենայն) հայոց: եւ պատրիարք(ք) Վաղարշապատու. լուսակառոյց մեծի եւ սրբոյ. Աթոռոյն Էջմիածնի: գոլով ՁԲ(82) ամօք, եւ չորիւք ամսօք, ԻԶ(26) ամ, ի հայրապետութեանս իմում, մերձ ի ժամ մահուան իմոյ ի մայրաքաղաքս Կոստանդնուպօլիս ընդ հովանեաւ ս(ուր)բ ա(ստուա)ծածին եկեղեցւոյն: Առաջի ամենատեսին ա(ստուծո)յ: եւ առաջի պատուական եւ մեծարգոյ եպ(ի)սկ(ո)պ(ո)սին Զալաթիոյ որ ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի տէր Գասպար Գասպարինի: Վերատեսուչ ս(ուր)բ աթոռին ճիսվիթի կարգեն յ(իսու)սեան. տ(է)ր Ֆրանչիսկոս դի Ջիլի Ֆրանցէզ: Եռու զդաւանութի(ւն)ս իմ, զորս Հաւատամ եւ դաւանիմ. զոր ինչ ի վերայ գրելոցն. աւանդեցաւ մեծի. եւ առաքելական ընդհանուր ս(ուր)բ եկեղեցւոյն հոմայու: Հաւատամ եւ զնոյն ինքն, զս(ուր)բ եկեղեցին հոմայու. ունել լի եւ դերազոյն. կատարեալ իշխանութիւն եւ պետութիւն. ի վերայ ընդհանրական կ(ա)թ(ո)ղիկէ եկ(ե)ղ(ե)ցւոյ: Հաւատամ եւ զվեհապետն նմին ս(ր)բ(ո)յ եկեղեցւոյ: Աթոռակալ եւ փոխանորդ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, կապող եւ արձակող ի յերկինս եւ ի յերկրի: Հաւատամ զընկալեալն ի նմանէ ընկալեալ ի յերկինս եւ ի յերկրի եւ զթողեալն թողեալ, ի յերկինս եւ ի յերկրի: Ընդունիմ եւ պատուեմ. եւ հետեւիմ հնազանդացելոցն, յընդհանրականի, մեծի եւ առաքելական ս(ուր)բ եկ(ե)ղ(ե)ցւոյն հոմայու: Ի կեանս յայս եւ ի հանդերձեալն: Հերքեմ, եւ նզովեմ զնդդիմական, եւ զհակառակողսն, նմին մեծի սրբոյ եւ առաքելական եկեղեւոյն հոմայու. ի կենս յայս եւ ի հ(ա)նդ(ե)րձ(եա)լն զրեցաւ դաւանութի(ւն)ս ի թուին Հայոց ՌՃԻԹ (1680) Օգոստոսի մէկն, վ(ա)ս(նորո)յ ինձ Ցակոբայ ամ(ենայն) Հայոց կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սիս ընդունելի է որ եւ ձեռամբ իմով ձեռագրեցի, առ ի հաստատութիւն գրոյս յայսմիկ»:

(Ստորագրուած)

«Ք(րիստոս)ի ծառայ Ցակոբ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս յամ(ենայն հայոց»:

Ցակոբ Կաթողիկոս ստորագրութեան ձախ կողմը դաւանագրին տակ չորս տող երկու տարբեր գրչէ երկուքական տողնոց գրութիւն,

«Io Francesco lestringant della compagnia di giesu testimonio.
Io Francesco guilly della compin di giesu testimonio,
Ita est F. Gaspar Gasparrinus Epis (Episcopus) Cyzicenus Suffr et Vics. Aplicus consti Vicarius Apostolicus Constantinopolis)»

Այլ լուսանցքին կայ սա հինգ տողերը, հայերէն.—

«Ես սաղամոն Լէոնեան լսեցի ականջօքս զդաւանու(թ)ի(ւն) տ(եառ)ն Ցակոբայ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի. որ եւ ձեռնադրեաց ձեռամբն. վ(ա)ս(նորո)յ վկ(ա)յ(ե)մ զի ձեռամբ իմով գրեցի: SALAMON DI LEON:» (Թիրեաքեանի Ազաթանգեղոսի մէջ յիշատակագրողն է:)

«Ես Թադէոս եր(է)ցս համազասփեան կայի առաջի զոր իմով թարգմանու(թեամ)ք եւ դաւանութի(ւն) Եպ(իս)կ(ոպո)սին Ֆռանգաց զոր ի վ(է)ր(ա) թղթոյս կայ գրեցեալ:»(*)

Հոս անմիջապէս ըսենք որ դաւանագրութեան գրչութիւնը ոչ մէկ կերպով կարելի է վերագրել Ցակոբ Ջուղայեցիին, այլ որոշ կարելի է ըսել որ Սաղամոն Լէոնեանին գրչութիւնն է: Սաղամոն (Սողոմոն) Լէոնեան Ոսկան վարդապետ Երեւանցիի քեռորդին էր Հռոմէադաւան եղած եւ լատինացում փորձող: Իսկ Թա-

(*) CONGRESSI ARMENO, vol. 5. էջ 598 ա:.